

1911 թ. արդէն լրանում է Վիեննայի Մխիթարեան միաբանութեան հիմնման 100-ամեակը, եւ այդ առիթով գոյգ հեռագրեր են ստացուում Գեռլայից, մէկը՝ քաղաքային իշխանութեան կողմից եւ միւսը՝ տեղի հայկական որբանոցի վարչութեան կողմից⁵⁵:

Գեռլայից ստացուած եւ «Հանդէս ամսօրեայ»-ում տեղ գտած յաջորդ երկու հեռագրերը վերաբերում են Գոլրիկեան արբաժոր ծննդեան 60-ամեակին եւ ապա վախճանմանը: Արբաժոր 60-ամեակի առիթով Գեռլայի հոգեւոր հովուի շնորհաւորական հեռագրում ասուում է. «Ուրախալի յոբելեանիդ առթիւ կ'աղօթեմ, որ բարերար Աստուծոյ սէրը ոսկեգօծէ գերապայծառութեանդ ապագայ կեանքը»⁵⁶:

1931 թ. Արբաժոր վախճանման առիթով էլ Գեռլայի հոգեւոր հովիւ Տ. Բարդուղիմէոս Շահինը գրում է. «Այս լուրը տիրեցուց ոչ միայն ամբողջ Հայաքաղաքիս հայութիւնը, այլեւ մասնաւորաբար զիս, Ռրուն վերջին ձեռնադրեալն ըլլալու ուրախութիւնն եւ պատիւն ունեցած էի»⁵⁷:

Այս հեռագրից, փաստօրէն, նաեւ իմանում ենք, որ Հայաքաղաքի վերջին

55 ՀԱ., 1911, էջ 641, 644:
56 ՀԱ., 1921, էջ 268:
57 ՀԱ., 1931, էջ 17:

ձեռնադրուած Հայ հոգեւորականը, ով ձեռնադրուել է հէնց Գոլրիկեանի կողմից, եղել է Տ. Բարդուղիմէոս Շահինը:

Գեռլայի Հայ կաթողիկէ համայնքը 1937 թ. շնորհաւորում է նաեւ «Հանդէս ամսօրեայ»-ի հրատարակութեան յիսունամեակը:

Շարունակելով նախորդ շրջանի աւանդոյթը, 1971 թ. Գեռլայի հայութիւնը շնորհաւորական հեռագիր է ուղարկում Հ. Գրիգորիս Մանեանին Մխիթարեան միաբանութեան ընդհանուր արբաժայր ընտրուելու առիթով: Այս հեռագիրն արդէն համայնքային բնոյթ ունէր, քանի որ ստորագրուած էր այսպէս՝ «Գեռլա Հայաքաղաքի Հայ Հասարակութեան կողմից»⁵⁸:

Տրանսիլուանիայի հայութեան հետ Մխիթարեան միաբանութեան շուրջ 300-ամեայ հոգեւոր-մշակութային այս հաղորդութիւնը հոգեւոր բարոյական պարտք է դնում Միաբանութեան վրայ այսուհետեւ եւս չանտեսել տեղի Հայ կաթողիկէ համայնքը, ինչպէս նաեւ՝ հրատարակել Միաբանութեան դիւանները՝ Տրանսիլուանիային վերաբերող մեծաթիւ պատմաաղբիւրագիտական բնոյթի վաւերագրերը:

58 ՀԱ., 1971, էջ 273:

ՎԻԵՆՆԱՅԻ ՄԽԻԹԱՐԵԱՆՆԵՐՆ ՈՒ ԼԵՀԱՀԱՅՔ

Փիրուզա Սաւցակաւեան

Լեհահայ համայնքի¹ եւ Վիեննայի Մխիթարեան միաբանութեան յարաբերութիւնների մասին հնարաւոր չէ լիարժէք պատկերացում կազմել, եթէ այս յարաբերութիւնները չդիտարկենք Լեհաստան-Աւստրիական կայսրութիւն յարաբերութիւնների համատեքստում, այն պարզ պատճառով, որ Լեհահայ համայնքը, գործելով Լեհաստանի կազմում, չէր կարող անմասն մնալ Լեհաստանում տեղի ունեցող զարգացումներից, ինչպէս նաեւ Վիեննայում հաստատուած եւ աւստրիական կայսրութեան քաղաքականութեան կրողն՝ ու արտայայտողը Հանդիսացող միաբանութեան այս ճիւղը՝ Աւստրիայում տեղի ունեցող իրադարձութիւններից: 1772 թ. Լեհական թագաւորութիւնը բաժանուեց Ռուսական կայսրութեան, Պրուսիայի եւ Աւստրիայի միջեւ: Զաւթիչների նոյն կազմը պահպանուեց նաեւ Լեհաստանի պատմութեան երրորդ բաժանման ժամանակ՝ 1795 թ.²: Լեհաստանի՝ Լեհահայերով բնակեցուած հարաւարեւելեան տարածքները, որոնք ընդգրկուեցին Գալիցիայի եւ Լոդոմերիայի թագաւորութեան կազմում, ինչպէս առաջին, այնպէս էլ եր-

րորդ բաժանման ժամանակ անցան Աւստրիային: Մխիթարեան միաբանութեան վիեննական ճիւղը, լինելով աւստրիահայապետակ, բնական է, որ լայն իրաւունքներ ստացաւ այդ կայսրութեան մի մասը կազմող Լեհական հողերում բնակուող Հայ համայնքի նկատմամբ:

Սկսած ԺԸ դարի վերջերից Լեհահայոց համայնքի եւ Վենետիկի Մխիթարեան միաբանութեան միջեւ եղած կապերի մասին են փաստում Վենետիկի Մխիթարեան հաստանից բերուած որոշ ձեռագրերի հաստանից նկարագրութիւնները, ինչ-ձեռքբերման նկարագրութիւնները, ինչպէս նաեւ՝ վենետիկեան մխիթարեանների պէս նաեւ՝ վենետիկեան միաբանների պայցելութիւնները Լեհահայոց համայնքի³:

Վիեննայի Մխիթարեան միաբանութեան եւ Լեհահայոց յարաբերութիւնները դիտարկենք հետեւեալ հարթութիւններում՝

1. Լեհահայ համայնք եւ աւստրիական տեղական իշխանութիւններ,
2. Մխիթարեան միաբանների՝ Լեհահայ համայնքի պատմութեանը վերաբերող ինքնուրոյն գործեր կամ թարգմանութիւններ,
3. Լեհահայ մխիթարեաններ:

2009 թուականից Հանդիսանալով կրակովի Եազելոնեան համալսարանի սպիրանտ՝ զբաղւում եմ Լեհահայ պատմական համայնքի Լեզուական առանձնայատկութիւնների⁴ ուսումնասիրութեամբ: Աշ-

1 F. Zajaczkowski, Wiadomość o Ormianach w Poznaniu, Lwów, 1842/K. Stopka, Ormianie w Polsce dawnej i dzisiejszej, Kraków 2000.
2 Երկրորդ բաժանումը տեղի ունեցաւ 1793 թ. Ռուսաստանի 23-ի Ռուսաստանի եւ Պրուսիայի միջեւ կնքուած պայմանագրով: Ի տարբերութիւն Վիեննայի թագաւորութեան առաջին եւ երրորդ բաժանումների, այս բաժանումը չէր մասնակցում Աւստրիան, որը զբաղւում էր Ֆրանսիայի հետ պատերազմով: Պրուսիային անցան Վիեննայի կոպուլակա կոչուած աշխարհագրական միաւորը, իսկ Ռուսաստանին՝ արեւելեան տարածքները, որ հիմնականում կենտրոնացուած էր Լեհահայոց համայնքը:

3 Հ. Մ. Վրո. Բժշկեան, Շանսպարհորդութիւն ի Լեհաստան եւ յայ կողման բնակեալս ի հայկազանց սերելոց ի նախնեաց Անի քաղաքին, Վեներիկ, 1830:
4 J. Reczek, Językowa polonizacja Ormian. „Język Polski”, (1987). A. Gawroński, Język Ormian Polski, Encyklopedia Polska, t. III, dzial III, cz. II, s.

խատույթեանս կցուելու է լեհահայոց կենտրոններում ընդօրինակուած կամ գրուած ձեռագրերի ցուցակ: Գոյութիւն ունեցող հայկական ձեռագրացուցակների հիման վրայ տեղեկութիւններ եմ հաւաքել Հայաստանի եւ Սփիւռքի հայագիտական միջաբ կենտրոնների, ինչպէս նաեւ՝ եւրոպական ու մերձաւորարեւելեան գրադարաններում պահուող, լեհահայ միջավայրում ընդօրինակուած ձեռագրերի մասին: Վիեննայի Մխիթարեան միաբանութեան ձեռագրացուցակներն ուսումնասիրելիս՝ նկատեցի, որ ԺԹ. դ. երկրորդ կէսից սկսուած է լեհահայ կենտրոններում, յատկապէս՝ Լվովի արքեպիսկոպոսարանում պահուող հայկական ձեռագրերի հոսք դէպի Վիեննայի Մխիթարեան միաբանութիւն: Ձեռագրերը Վիեննա էին ուղարկուած ինչպէս լեհահայ բարձրատիճան հոգեւորականների՝ արքեպիսկոպոսների, առանձին անհատների, այնպէս էլ Մխիթարեան միաբանութեան հոգեւորականների կողմից: Վիեննա ուղարկուած կամ տարուած ձեռագրերի մէջ կան ինչպէս աղբիւրագիտական առանձնապէս մեծ արժէք չներկայացնող, այնպէս էլ լեհահայոց համայնքի ԺԶ. ԺԷ. դդ. պատմութեան ուսումնասիրման համար եղակի նշանակութիւն ունեցող ձեռագրեր⁵: Կան ինչպէս աշխարհիկ, այնպէս էլ հոգեւոր բովանդակութեան գործեր: Չկայ ժամանակագրական յստակ տարանջա-

452-455. E. Tryjarski, Ze studiów nad rękopisami i dialektem kipcackim Ormian Polskich, RO, t. XXIV/RO, t. XXIII, 2.
 5 Յուցակ հայերէն Ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, կազմեց հայր Յ. Վրդ. Տաշեան, Վիեննա 1895, թիւ 441 (1572-1632), Պատճէնք Ամուսնական դաշնագրաց Հայոց Լէմպերկի. թիւ 444 (1608-1624), Անդորրագիրք եւ կահագիրք Լէմպերկի Հայոց. թիւ 446 (1564-1608), Անդորրագիրք եւ կահագիրք Լէմպերկի Հայոց. թիւ 447 (1643-1667), Պատճէնք Ամուսնական դաշնագրաց Հայոց Լէմպերկի. թիւ 452 (1598-1637), Մատենա ժողովարարութեանց Լեհաստան:

տում, քանի որ ուղարկուած էին ինչպէս վաղմիջնադարեան, այնպէս էլ ԺԸ.-ԺԹ. դդ ձեռագրեր: 1895 թ. արքեպիսկոպոս Իսահակ Իսակովիչի (1882-1901)⁶ կողմից Վիեննա է ուղարկուել 40 ձեռագիր հետեւեալ ընծայագրութեամբ՝ «Առաքեաց Գեր[ապայծառ] Ս[ա]հ[ա]կ Ս[ա]հ[ա]կեանց Արքեպ[իսկոպոս] Լէմպերկի հայոց ի նուէր Մխիթարեան Մատենադարանին ի Վիեննա, յամին 1895»: Կայ 1802 թ. մէկ ձեռագիր՝ ուղարկուած արքեպիսկոպոս Գեորգի Ռոմաշքանի (1875-1881) կողմից⁷, նաեւ՝ 1506 թ. մէկ ճաշոց Գալիցիայի Լիւշեց քաղաքի ժողովրդագետ՝ տէր Դոմինիկոս Բարոնչից⁸: Փաստօրէն լեհահայոց համայնքին պատկանող ձեռագրերը Վիեննա էին ուղարկուած գոյութիւն ունեցող համայնքի առկայութեան պայմաններում: Ամենամեծ խումբն ուղարկուած էր Հէնց արքեպիսկոպոսի կողմից: Եթէ Լվովի արքեպիսկոպոսի կողմից Վիեննա ուղարկուած ձեռագրերի վրայի գրութիւնը փաստում է, որ դրանք նուիրուել են Մխիթարեան միաբանութեանը, ապա տարակուսանքի տեղիք է տալիս լեհահայոց կենտրոններից մխիթարեան գործիչների կողմից բերուած այլ ձեռագրերի վրայ թողնուած գրութիւնների բովանդակութիւնը. դրանք սկսուած են այսպէս. «Առաքեաց ի վանս...» (Մխիթարեան միաբանութիւն - Փ. Մ.), «Եբեր ընդ իւր...», «Գտի զմատեանս»: Ըստ իս՝ այս ձեռակերպումներն աւելի շուտ հարցեր են ծնում, քան պարզաբանումներ են տալիս: Անհասկանալի է, թէ ձեռագրերը ում են պատկանել մինչեւ Վիեննա ուղարկուելը, որտեղ են պահուել՝ անհատների մօտ, թէ եկեղեցու սեփականութիւնն են հանդիսա-

6 Ks. T. Zaleski, Biskup ormiański Izaak Isakowicz "Zlotousty". Duszpasterz, społecznik i patriota 1824-1901, Kraków, 2001.
 7 Յուցակ հայերէն Ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Է. Յ. Վրդ. Տաշեան, էջ 970:
 8 Նոյն տեղում, էջ 52:

ցել, գտնուել են, թէ նուիրուել են Մխիթարեան գործիչին, ինչ հիմունքներով է տեղի ունեցել ձեռագրերի տեղափոխումը Վիեննա:

Ինչո՞ւ է Լվովի հայոց արքեպիսկոպոսը համայնքի գոյութեան ընթացքում համայնքի սահմաններից դուրս հանում այդ նոյն համայնքի պատմութեան ուսումնասիրման համար արժէքաւոր ձեռագիր-փաստաթղթեր: Եթէ հիմք ընդունենք ուղարկուած ձեռագրերի վրայի գրութիւնները (իսկ դրանց իսկութեանը չվստահելու փաստարկ չունենք), ապա ձեռագրերը նուիրուել են Վիեննայի Մխիթարեան միաբանութեանը: Հայագիտական գործունէութիւն իրականացնող հաստատութեանը ձեռագրեր նուիրելու փաստը չէ, որ զարմանք է յարուցում, քանի որ դա տարածուած երեւոյթ է հայոց մէջ: Մինչ օրս էլ Մատենադարանի հաւաքածոն պարբերաբար հարստացում է բարերարների նուիրատուութիւնների շնորհիւ: Սակայն այս դէպքում ուղարկողը Լվովի արքեպիսկոպոսն է եւ ոչ թէ շարքային բարերար: Որեւէ հանդիսաւորութեան առթիւ ձեռագիր նուիրելն ինքնին հասկանալի կը լինէր, սակայն մէկ տարուայ ընթացքում ուղարկել ժամանակագրական, բովանդակային եւ արժէքային տարբեր բնոյթի չորս տասնեակ ձեռագրեր, դժուար է դիտարկել որպէս շարքային նուիրաբերութիւն: Սոյն յօդուածում դիտարկել եմ տեսութիւններ, որոնք կարող են հնարաւոր բացատրութիւն տալ վերոյիշեալ իրողութեանը, թէեւ բացառուած է, որ նոր յայտնաբերուած աղբիւրների կամ ինձ դեռեւս անծանօթ գրականութեան հիման վրայ յետագայում այլ բացատրութիւններ առաջադրեմ:

Ներկայ պահին, հիմնուելով մինչ այժմ իմ կողմից ուսումնասիրուած ինչպէս հայ, այնպէս էլ լեհ գրականութեան վրայ, կարող եմ ասել, որ դեռեւս չեմ գտել Վիեննայի Մխիթարեան միաբանութեան

լեհահայոց համայնքի հետ ունեցած յարաբերութիւններին նուիրուած առանձին ուսումնասիրութիւն: Հետաքրքիր է, որ նախադէպ եղել է՝ նուիրուած լեհահայութեան հետ պատմական բաղձաթիւ ընդհանրութիւններ ունեցող հունգարահայութեանը⁹: Թեմային հնարաւոր առնչութիւն ունեցող յօդուածներ փնտրել եմ ինչպէս հայկական, այնպէս էլ լեհական պարբերականներում: Յիշատակութեան արժանի են Վիեննայի Մխիթարեան միաբանութեան եռահայնայի Մխիթարեան միաբանութեան եռահայնայի Մխիթարեան միաբանութեանը¹⁰, ուր տեղեկուտոր ձեռագրացուցակները, ուր տեղեկութիւններ կան լեհահայ կենտրոններից Վիեննայի Մխիթարեան միաբանութեան մատենադարան փոխադրուած այս կամ այն ձեռագրի նուիրատուի կամ առհասարակ Վիեննա հասնելու մասին: Լեհահայոց համայնքի եւ Վիեննայի Մխիթարեան միաբանութեան միջեւ յարաբերութիւնների բանութեան միջեւ յարաբերութիւնների մասին արժէքաւոր տեղեկութիւններ կարելի է գտնել Հէնց միաբանութեան պարբերականում՝ «Հանդէս ամսօրեայ»-ում, ուր տպուած էին լեհահայոց համայնքի վերատպուած էին լեհահայոց համայնքի վերաբերեալ մխիթարեան գործիչների եւ օտաբերեալ մխիթարեան գործիչների կողմից ու եկեղեցական այլ գործիչների կողմից նոր ընտրուած Մխիթարեան արքեպիսկոպոսները ընտրուած շնորհաւորանքներ կամ ցաւակցութիւններ նախկին արքեպիսկոպոսների մահուան առթիւ:

9 Յովն. Անցի, Մխիթարեանց ու Հայաքաղաքը - ՀԱ, փետրուար (1895), Վիեննա, էջ 50-54:
 10 Յուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, կազմեց Է. Յ. Վրդ. Տաշեան, Վիեննա, 1895. Յուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան Մատենադարանին ի Վիեննա, հտ. Բ, կազմեց Է. Յ. Վրդ. Տաշեան, Վիեննա, հտ. Բ, կազմեց Է. Յ. Վրդ. Տաշեան, 1963. Յուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան Մատենադարանին ի Վիեննա, հտ. Գ, կազմեց Մատենադարանին ի Վիեննա, հտ. Գ, կազմեց Է. Օ. Վրդ. Սեքուլեան, Վիեննա, 1983:

